



Աշխատություն 01(07), Փետրվար 2007, Երևան, Հայաստան
Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)

Հայաստանի արտաքին պետական պարտքը Գազիկ Թորոսյան

Թողարկումը պատրաստվել է «ՏԻՄ, կրթության և առողջապահության ոլորտների մոնիտորինգ և գնահատում ԱՅԴԾ շրջանակներում» ծրագրի շրջանակներում՝ Օքսֆամ ՄԲ աջակցությամբ:

Բովանդակություն

Ներածություն

Հայաստանի արտաքին պարտքի ձևավորումը

Հայաստանի արտաքին պարտքը 2007-ի սկզբի դրությամբ

Հավելված

Ներածություն

Պարտք հասկացությունը հանրությունը գնահատում է, որպես բացասական երևույթ՝ «պարտք ունենալը լավ բան չի» արտահայտությունը հաճախ ենք լսում: Նույն վերաբերմունքը տածվում է նաև պետական պարտքի հանդեպ, հատկապես՝ արտաքին: Երբ լսում ենք մեր երկրի արտաքին պարտքի մասին, առաջին միտքը, որ ծագում է, դա «իսկ ինչպե՞ս ենք մարելու այդ պարտքը»:

Արտաքին պարտքը, երկրի բնակչության կողմից բացասական երևույթ է գնահատվում, այն ասոցիացվում է որոշակի բացասական երևույթների հետ, ինչպիսին են արտաքին ֆինանսական կախվածությունը, պարտքի ճնշման տակ արտաքին քաղաքական ճնշումների ենթարկվելը և այլն:

Այդ ամենի կողքին պարտքն ինքնին բարդ կառավարելի և ռիսկային հասկացություն է, պարտքի դիմաց վճարվում են տոկոսագումարներ, որոնք առաջացնում են հավելյալ ծախսեր, արտաքին պարտքի դեպքում, հատկապես երբ այն համեմատաբար ցածր տոկոսներով է լինում, պետությունները հաճախ, կամա թե՛ ակամա, ստանձնում է որոշակի պարտավորություններ վարկատուի պահանջով:

Հարց է առաջանում, եթե պարտքը դժվար կառավարելի և իրենից որոշակի վտանգներ պարունակող գործոն է, ապա ինչու՞ չի կարելի խուսափել դրանից, այլ կերպ ասած՝ ծախսել այնքան, որքան ունենք:

Օրինակ Նախկին խորհրդային միությունում, երբ գործում էր հզոր պլանային տնտեսական համակարգ և երբ տնտեսությունն աճում էր իր վերարտադրության հաշվին, տնտեսության մեջ խոշորածավալ ներդրումների իրականացման որոշումներն ընդունվում էին կենտրոնացված կարգով և միայն կենտրոնական կառավարման մարմինների կողմից: Ներդրումներ իրականացնելիս, ֆինանսավորման աղբյուրը միայն ներքին ռեսուրսներն էին, որոնք գոյանում էին հարկերի, պետական արտադրական միավորների կուտակված ազատ միջոցների հաշվին: Նման համակարգում ներդրումների իրականացման համար որոշում կայացնելիս միշտ առաջնորդիչ եղել են պետության ռազմավարական նպատակները և առաջնահերթությունները: Փաստորեն արտադրական միավորները, ինչպես նաև առանձին հանրապետությունները ազատ չեն եղել ներդրումների իրականացման տեսանկյունից, և ցանկացած արտադրության ընդլայնումը կախված է եղել կենտրոնական մարմնի որոշումից, ինչպես նաև տվյալ պահին միջոցների առկայությունից, և այդ սահմանափակումները միշտ չէ որ թույլ են տվել ճիշտ որոշումներ ընդունել, իսկ արտաքին միջոցների ներգրավման հարցը գրեթե բացառվել է:

Իսկ ազատ շուկայական տնտեսության պայմաններում ներդրումների իրականացման մեխանիզմը այլ է: Տարբեր անհատների, ձեռնարկությունների և, ինչու չէ, պետությունների ազատ ֆինանսական միջոցները հայտնվում են ֆինանսական շուկաներում: Արդյունքում ձևավորվում է այդ ռեսուրսների շուկայական գինը (տոկոսադրույքը): Ներդրումներ իրականացնող սուբյեկտները ինքնուրույն են իրենց որոշումների մեջ և, ելնելով իրենց շահութաբերության մակարդակից և ֆինանսական ռեսուրսների շուկայական գնից, որոշում են կայացնում արտաքին միջոցների հաշվին ավելացնել, թե՞ ոչ, իրենց արտադրական հզորությունները:

Նույնը վերաբերվում է նաև պետությանը, որը ներգրավելով արտաքին վարկային միջոցներ, հնարավորություն է ունենում ներդրումներ իրականացնել և սպառել ավելին, քան իր ներքին տնտեսությունն է արտադրում: Արտաքին միջոցների արդյունավետ օգտագործումն առաջին հերթին թույլ է տալիս արագացնել երկրի տնտեսական աճի տեմպը:

Սակայն պետք չի մտածել, որ օգտվողը վարկառու կողմն է միայն լինելու: Տվյալ դեպքում տնտեսական աճի վրա ազդեցությունը երկկողմանի է՝ արտաքին միջոցների ներգրավումը

ստեղծում է տնտեսական Էֆեկտներ և՛ վարկատու, և՛ վառվառու երկրներում: Ֆինանսական միջոցների դեֆիցիտ ունեցող երկրներում միշտ բարձր են լինում տոկոսադրույքները, իսկ միջոցների ավելցուկ ունեցող երկրներում ընդհակառակը՝ բավականին ցածր են լինում: Արտաքին վարկավորման միջոցով հնարավորություն է ստեղծվում դեֆիցիտ ունեցող երկրներում, ի հաշիվ արտաքին ներհոսքի նվազեցնել տոկոսադրույքները, իսկ ավելցուկ ունեցող երկրներում արտաքին պահանջարկի ստեղծման հաշվին՝ բարձրացնել: Այսպիսով, այն ձեռնտու է երկուստեք և չի կարելի ասել, որ միանշանակ ազդում է ներդրվող երկրի տնտեսական զարգացման վրա՝ տոկոսադրույքների բարձրացումն ազդում է նաև վարկատու երկրի տնտեսական զարգացմանը:

Արտաքին վարկային պարտավորությունները պետությունը ստանձնում է հիմնականում երկրի ռազմավարական կարևորագույն ճյուղերը զարգացնելու, նոր աշխատատեղեր ստեղծելու, տնտեսության ակտիվացման միջոցով տնտեսական աճը խթանելու համար:

Սույն նյութի շրջանակներում կփորձենք հակիրճ ներկայացնել Հայաստանի արտաքին պարտքի ձևավորման պատմությունը: Առանձին բաժնով անդրադարձ է կատարվում կրթության և առողջապահության ոլորտներում վարկային միջոցներով իրականացվող վարկային ծրագրերին, որոնք այդ ոլորտներում վերջին տարիներին իրականացվող բարեփոխումների բավականին կարևոր և բաղկացուցիչ մասն են կազմում:

Հայաստանի արտաքին պարտքի ձևավորումը

Խորհրդային Միության փլուզումից հետո Ռուսաստանն իր վրա վերցրեց նախկին Միության արտաքին ակտիվները և պարտքերը, ուստի անկախացումից հետո նախկին միության հանրապետությունները, այդ թվում և Հայաստանը, անկախացան արտաքին պետական պարտքի գոյական մակարդակով:

Անկախության առաջին իսկ տարուց Հայաստանի գերնպատակն էր տնտեսության ազատականացման միջոցով ապահովել բարձր տնտեսական աճ, վերականգնել խարխլված տնտեսությունը: Իսկ այդ ժամանակ կարելի է ասել առանց արտաքին օժանդակության դա անհնար էր, քանի որ իսպառ բացակայում էին ներքին ռեսուրսները և արտաքին քաղաքատնտեսական գործոնները լրջագույն խոչընդոտ էին հանդիսանում ներքին ռեսուրսների հաշվին երկրի զարգացման համար:

Նորանկախ Հայաստանի արտաքին պարտքի պատմությունը, կարելի է ասել, սկիզբ է առել 1992 թվականից: Սկսած 1992 թվականից Հայաստանը սկսեց անդամակցել մի շարք խոշոր միջազգային կառույցների: Կնքվեցին մի շարք միջազգային պայմանագրեր, որոնք թույլ տվեցին ստանալ արտաքին օժանդակություն միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից: Ընդ որում, ստացված օժանդակությունը թե՛ վարկային և թե՛ դրամաշնորհային միջոցների տեսքով էր:

Սկզբնական տարիներին արտաքին օժանդակությունը կրում էր առավելապես դրամաշնորհների հիման վրա ֆինանսավորվող տեխնիկական օժանդակության և պարենային օգնության բնույթ: Հետագա տարիներ տեխնիկական օժանդակությունը և պարենային օգնությունը հետզհետե նվազեցին արտաքին օժանդակության մեջ և արտաքին օժանդակությունը սկսեց կրել զարգացման ծրագրերի ֆինանսավորման բնույթ՝ հիմնականում վարկային ծրագրերի տեսքով:

Հայաստանն արտաքին պարտավորությունները ստանձնում է հետևյալ հիմնական նպատակների համար՝

- ա) պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման,
- բ) վճարային հաշվեկշռի աջակցության և պահուստների համալրման,
- գ) կառավարության որդեգրած տնտեսական քաղաքականության գերակայությունների ապահովման, տնտեսության առաջնային ոլորտների զարգացման համար ներդրումային ծրագրերի ֆինանսավորման,

- դ) վարկային երաշխավորման պարտավորությունների իրագործման,
- ե) նախկինում ստանձնված պետական պարտքի վերաձևակերպման:

ՀՀ պետական պարտավորությունները հիմնականում գոյանում են ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից ստանձնվող պարտավորությունների հետևանքում, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից տրամադրվող երաշխիքների հիման վրա ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունների կողմից վերցվող արտաքին վարկերի հաշվին:

Հայաստանի Հանրապետությունը 1992 թվականի մայիսի 28-ին դարձավ Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) անդամ պետություն: ԱՄՀ-ն երկրներին ֆինանսական աջակցության տրամադրման միջոցով խրախուսում է միջազգային արժույթային համագործակցությունը, փոխարժեքների կայունությունը, միջազգային առևտրի ընդլայնումը, նպաստում է տնտեսական աճին և զբաղվածության մակարդակի բարձրացմանը, աջակցում է վճարումների բազմակողմանի համակարգի ստեղծմանը, ինչպես նաև աջակցում է վճարային հաշվեկշռի հետ կապված ժամանակավոր դժվարությունների դեպքում:

Հայաստանը 1992 թվականի սեպտեմբերից դարձավ նաև Համաշխարհային բանկի (ՀԲ) անդամ պետություն: Այդ անդամակցությունը Հայաստանին թույլ տվեց արտաքին վարկային միջոցների ներգրավմամբ նպաստել երկրում տնտեսական աճի ավելի բարձր տեմպերին, մեծացնել զբաղվածության մակարդակը և բարելավել սոցիալական ծառայությունները:

Համաշխարհային բանկի վարկային ծրագրերի մեկնարկը Հայաստանում սկսվեց 1993 թվականի մարտին՝ Ինստիտուցիոնալ բարեփոխումների վարկի տրամադրմամբ, որը օգնեց ամրապնդել երկրի հնարավորությունները քաղաքականության բարեփոխումներ իրականացնելու և անցումային տնտեսությունը կառավարելու հարցում:

Ներկա դրությամբ Հայաստանի արտաքին պարտքի շուրջ 84.4 տոկոսը բաժին է ընկնում այս երկու խոշոր միջազգային կառույցներին:

Բացի այդ խոշոր վարկեր են տրամադրվել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրամիության, Գերմանիայի Դաշնության, Ֆրանսիայի, Ռուսաստանի դաշնության, Թուրքմենստանի¹, ԱՄՆ-ի և Ճապոնիայի կողմից:

Նման կառույցները վարկերը տրամադրում են բավականին արտոնյալ պայմաններով, և մինչ օրս նրանց կողմից տրամադրված վարկերի մեծ մասն արտոնյալ է:

Հարկ է նշել, որ առավել արտոնյալ են համարվում Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Ճապոնիայի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի, ինչպես նաև որոշակիորեն ԱՄՆ-ի կողմից տրամադրվող վարկերը: Ոչ արտոնյալ պայմաններով Հայաստանը վարկային միջոցներ է ներգրավել հիմնականում Ռուսաստանի Դաշնությունից և Թուրքմենստանից:

Ինչ վերաբերվում է վարկերի արտոնյալությանը, ապա Հայաստանը որդեգրել և վարում է արտաքին արտոնյալ վարկերի ներգրավման քաղաքականություն: Վարած քաղաքականության հետևանքում 2006-ի դրությամբ արտաքին պարտքի շուրջ 98.9 տոկոսը կազմում են արտոնյալ վարկերը. 2005-ին այդ ցուցանիշն արդեն իսկ 98 տոկոս էր, իսկ 2000-ին այն կազմում էր 74 տոկոս:

¹ Գազի դիվանդ պարտքը վերաձևակերպվել է, որպես արտաքին պետական պարտք

Հայաստանի արտաքին պարտքը 2007-ի սկզբի դրությամբ

2005 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 1099.2 միլիոն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 22 տոկոսը:


2006 թվականի ընթացքում արտաքին աղբյուրներից ստացվել է 93.4 միլիոն ԱՄՆ դոլար և միևնույն ժամանակ կատարվել են 48.3 միլիոն ԱՄՆ դոլարի արտաքին վարկերի մարումներ, իսկ տարվա ընթացքում արտաքին վարկերի սպասարկումը կազմել է 10.2 միլիոն ԱՄՆ դոլար: Պարտքային գործառնությունների հետևանքում արտաքին պարտքի զուտ դրամային ավելացումը կազմել է 45.1 միլիոն ԱՄՆ դոլար:

Արտաքին աղբյուրներից ստացված գումարներից 83.4 միլիոն ԱՄՆ դոլարը ՀՀ կառավարության և կառավարության երաշխիքներով տրամադրված միջոցներն են, իսկ 9.9 միլիոն ԱՄՆ դոլարը ՀՀ կենտրոնական բանկի ստացած միջոցներ են:

Տարվա ընթացքում արտաքին պարտքային գործառնությունների արդյունքում ՀՀ արտաքին պարտքը կազմել է 438.3 միլիարդ դրամ, կամ 1205.6 միլիոն ԱՄՆ դոլար: Ինչպես տեսնում ենք, տարվա ընթացքում արտաքին պարտքն աճել է 106.4 միլիոն դոլարով կամ 9.7 տոկոսի չափով, որը պայմանավորված է ոչ միայն պարտքային գործառնություններով. պարտքի աճի վրա ազդել են նաև փոխարժեքային տատանումները: Այսպիսով, արտաքին պարտքի աճի 45.1 միլիոն դոլարը պայմանավորված է զուտ պարտքային գործառնություններով, իսկ 61.3 միլիոն դոլարի չափով պարտքի աճը պայմանավորված է փոխարժեքային տատանումներով:

2006 թվականի դրությամբ ՀՀ արտաքին պարտքի 87.5 տոկոսը SDR-ով ստանձնած պարտավորություններ են, 7.7 տոկոսը՝ Եվրոյով, 4.6 տոկոսը՝ ԱՄՆ դոլարով, իսկ 0.3 տոկոսը՝ այլ արտարժույթներով ստանձնած պարտավորություններն են: Ուստի ԱՄՆ դոլար, SDR և Եվրո փոխարժեքային տատանումներն էապես ազդում են ՀՀ արտաքին պարտքի դոլարային արտահայտման վրա: Այսպես, 2005-ի վերջի դրությամբ 1 SDR=1.42927 ԱՄՆ դոլար, և 1 Եվրո=1.1797 ԱՄՆ դոլար փոխարժեքների պայմաններում ՀՀ արտաքին պարտքը փոխակերպվել է 1 ԱՄՆ դոլարի, իսկ 2006-ի արտաքին պարտքի հաշվարկների ժամանակ օգտագործվել են հետևյալ ձևավորված արտարժույթային փոխարկման կուրսերը՝ 1 SDR=1.5044 ԱՄՆ դոլար և 1 Եվրո=1.317 ԱՄՆ դոլար:

Գծապատկեր 1. ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքն ըստ պարտավորությունը ստանձնած մարմինների




2006-ի վերջի դրությամբ ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքն ըստ ստանձնող մարմինների ունեցել է հետևյալ բաշխվածքը՝ պարտքի 86.4 տոկոսը կազմում են Կառավարության

պարտավորությունները, որից 0.4 տոկոսը տրամադրված երաշխիքների հիման վրա գոյացած պարտքն է և պարտքի 13.6 տոկոսը՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտավորություններն են: Ինչպես արդեն նշվեց վերը, Հայաստանը պարտավորություններ է ստանձնում մի շարք միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից: Հայաստանի արտաքին պարտքի շուրջ 88.8 տոկոսը բաժին է ընկնում միջազգային կազմակերպություններին, որտեղ ամենամեծ կշիռը կազմում է Համաշխարհային բանկի նկատմամբ պարտքը՝ 79.3 տոկոս և ընդհանրապես, ՀՀ արտաքին պարտքի 70.4 տոկոսը ՀԲ-ի նկատմամբ պարտավորություններն են: Պարտքի միայն 11.2 տոկոսն են կազմում օտարերկրյա պետությունների նկատմամբ պարտավորությունները, որտեղ ամենամեծ բաժինը ընկնում է Գերմանիային՝ 64 տոկոս, որը կազմում է ընդհանուր պարտքի 7.2 տոկոսը: Հարկ է նշել, որ Ռուսաստանի Դաշնության նկատմամբ պարտքը համարվում է ամբողջովին մարված և 2006-ի դրությամբ Հայաստանը Ռուսաստանի նկատմամբ արտաքին վարկային պարտավորություններ չունի:

ԱՄՆ-ի նկատմամբ վարկային պարտավորությունները կազմում են ընդհանուր գումարով 163.7 միլիոն դոլար կամ ընդհանուր պարտքի 13.6 տոկոսը, որն ամբողջովին ՀՀ կենտրոնական բանկին ստանձնած պարտավորությունն է:


Գծապատկեր 2. ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների, 2006 թվականի վերջի դրությամբ



2006 թվականի վերջի դրությամբ Հայաստանն ունի գործող շուրջ 67 արտաքին վարկային պայմանագրեր, որոնց գերակշիռ մասը՝ թվով 43-ը, ՀԲ-ի և Հայաստանի միջև գործող պայմանագրերն են:

Արտաքին պարտքի կառավարման և ռիսկայնության առումով կիրառվում են բավականին շատ ցուցանիշների համադրությունների և հաշվարկներ, սակայն կա մի քանի կարևոր ցուցանիշների համախումբ, որոնց համադրումների միջոցով կարելի է բնութագրել երկրի արտաքին պարտքի ծանրության աստիճանը: Միջազգային համադրումների համար սահմանված են այդ ցուցանիշների համեմատական և սահմանային մեծությունները, որոնցով տվյալ երկիրը, ըստ պարտքի աստիճանի, կարելի է որակավորել որպես նվազ, միջին կամ ծանր պարտքի բեռ ունեցող երկիր: Այդ ցուցանիշները մանրամասն ներկայացված են Հավելված 2-ում, իսկ ստորև ներկայացվում է այդ ցուցանիշների գրաֆիկական արտահայտումը, որը մեզ թույլ կտա բնութագրել Հայաստանի պարտքի ծանրությունը:

Գծապատկեր 3. Արտաքին պետական պարտքի ծանրությունը բնութագրող ցուցանիշները 2006 թվականին



Ինչպես տեսնում ենք Հայաստանի արտաքին պարտքը, ըստ ծանրության աստիճանի, հիմնականում չի գերազանցում Նվազ պարտքի բեռ ունեցող երկրների համար ընդունելի սահմանաչափերը, միայն Արտաքին պարտք/Արտահանում հարաբերակցությունն է բարձր այդ սահմանից, որն ի համեմատություն 2000 թվականի 196 տոկոսի նվազել է մինչև 86 տոկոս, իսկ նույն ցուցանիշը 2005-ին կազմել է 82 տոկոս, այսինքն՝ այն 2005-ի նկատմամբ 4 տոկոսային կետով աճել է:

Պարտքի բեռի գնահատման ընդունված չափանիշներից հարկ է նշել նաև Արտաքին պարտք/ՉՆԱ հարաբերակցությունը, որը Հայաստանի համար 2006-ին կազմել է 19 տոկոս (սահմանային ցուցանիշը ընդունված է 50 տոկոս) և Պարտքի սպասարկում/Բյուջեի եկամուտներ հարաբերակցության ցուցանիշը, որը, իր հերթին, Հայաստանի համար 2006-ին կազմել է 6 տոկոս՝ ընդունված 22.5 տոկոս միջին ցուցանիշի դիմաց:

Արտաքին պարտք/ՉՆԱ հարաբերակցության ցուցանիշը 2000 թվականից ի վեր գրանցում է բարելավման միտում: 2000 թվականին նույն ցուցանիշը կազմում էր 45 տոկոս, ինչը բավականին մոտ էր սահմանային ցուցանիշին, սակայն արդեն իսկ 2004-ին այն նվազել էր մինչև 33 տոկոս, իսկ 2006-ին այն կազմեց 19 տոկոս: Սակայն պետք է նշել, որ այս ցուցանիշի բարելավումը պայմանավորված է ոչ միայն ՉՆԱ շարունակական աճով, այլ այս ցուցանիշի վրա իր ազդեցությունն է թողնում նաև վերջին տարիներին գրանցվող ՀՀ դրամի արժեվորման փաստը:

Հավելված

Արտաքին պետական պարտքը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները

Չուտ ներկա արժեք / ՀՆԱ								
Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ	80% և ավելի							
Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ	48%-80%							
Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ	մինչև 48%							
	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Հայաստանի Հանրապետություն	30%	28%	28%	28%	26%	21%	14%	11%
Չուտ ներկա արժեք / Արտահանում								
Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ	220% և ավելի							
Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ	132%-220%							
Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ	մինչև 132%							
	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Հայաստանի Հանրապետություն	150%	122%	111%	98%	82%	75%	53%	50%
Պարտքի սպասարկում / Արտահանում								
Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ	25.90%							
Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ	23.45%							
Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ	7.80%							
	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Հայաստանի Հանրապետություն	17%	11%	10%	10%	16% (9%)*	10% (7%)*	4.6%	4.2%
Տոկոսավճար / Արտահանում								
Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ	11.65%							
Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ	9.85%							
Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ	3.60%							
	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Հայաստանի Հանրապետություն	5%	3%	4%	3%	1%	1%	0.9%	0.7%
Արտաքին պարտք / Արտահանում								
Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ	387.95%							
Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ	209.00%							
Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ	64.00%							
	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Հայաստանի Հանրապետություն	237%	196%	171%	149%	123%	120%	82%	86%
Արտաքին պարտք / ՀՆԱ								
Սահման	50.00%							
	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Հայաստանի Հանրապետություն	47%	45%	43%	43%	39%	33%	22%	19%
Պարտքի սպասարկում / Բյուջեի եկամուտներ								
Միջին ցուցանիշ	22.50%							
	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Հայաստանի Հանրապետություն	17%	16%	16%	17%	28% (15%)*	17% (6%)*	8%	6%

Արտաքին պետական պարտքը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները

	առ 30.12.2005թ.		առ 30.12.2006թ.		2006-ի փոփոխությունը 2005-ի նկատմամբ տոկոս
	միլիոն ԱՄՆ դոլար	Ընդամենի նկատմամբ, տոկոս	միլիոն ԱՄՆ դոլար	Ընդամենի նկատմամբ, տոկոս	
Արտաքին պետական պարտք	1,099.2	100.0	1,205.6	100.0	109.7
Բազմակողմանի վարկատուներ	982.9	89.4	1,070.5	88.8	108.9
Համաշխարհային Բանկ	750.9	68.3	849.2	70.4	113.1
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ	14.8	1.3	6.9	0.6	46.5
Գլոբ. զարգացման միջազգային հիմնադրամ	40.8	3.7	49.4	4.1	121.2
Արժույթի միջազգային հիմնադրամ	176.4	16.1	163.7	13.6	92.8
Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության հիմնադրամ (ՕՊԵԿ)	0.0	0.0	1.3	0.1	-
Երկկողմանի վարկատուներ	116.4	10.6	135.1	11.2	116.2
Գերմանիա	69.3	6.3	86.5	7.2	124.7
Ֆրանսիա	4.2	0.4	4.7	0.4	111.6
ԱՄՆ	41.3	3.8	40.3	3.3	97.7
Ճապոնիա	1.6	0.1	3.7	0.3	234.8